Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
սեպտեմբերի 30 -ի N 564 - Ա
որոշման

«ՕՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՋՐԱՏԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԱԿԱՊԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիտավան համայնքում 25 խմ տարողությամբ օրական կարգավորման ջրատարի վերանորոգման ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Վազաշեն համայնքի թիվ 1 և թիվ 2 աղբյուրակապերի կառուցման և միացման գործող ջրագծին շինարարական աշխատանքներ |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից հանգանակված միջոցներ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիտավան և Վազաշեն համայնքներ՝ բնագավառը ջրամատակարարում |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 5,500,000 դրամ, որից՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիտավան համայնքում 25 խմ տարողությամբ օրական կարգավորման ջրատարի վերանորոգում՝ 1,800,000 դրամ, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Վազաշեն համայնքի թիվ 1 և թիվ 2 աղբյուրակապերի կառուցման և միացման գործող ջրագծին աշխատանքներ՝ 3,700,000 դրամ |

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Հանրապետության Տավուշի մարզի Դիտավան համայնք, Տավուշի մարզի Վազաշեն համայնք |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ամբողջ ծրագրերը նախատեսվում է իրականացնել՝ 2020 թ. հոկտեմբերի 01-ից մինչև 2020 թ. դեկտեմբերի 30-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ժամկետում նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիտավան համայնքում 25 խմ տարողությամբ օրական կարգավորման ջրատարի վերանորոգում և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Վազաշեն համայնքի թիվ 1 և թիվ 2 աղբյուրակապերի կառուցում և միացում գործող ջրագծին: Ծրագրերը նախատեսվում է իրականացնել 2020 թ. հոկտեմբերի 01-ից մինչև 2020 թ. դեկտեմբերի 30-ը: Արժեքը՝ 5,500,000 դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Դիտավան համայնքում 25 խմ տարողությամբ օրական կարգավորման ջրատարի վերանորոգում ու Վազաշեն համայնքի թիվ 1 և թիվ 2 աղբյուրակապերի կառուցում և միացում գործող ջրագծին ՝ 5,500,000 դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Համագործակցություն չի նախատեսվում |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ